վերցնեն, հավի փոխարեն ձիեր առնեն, ամեն մի սպանվածի դիմաց տասը թուման առնեն: Կանանց խայտառակելու դիմաց, թող նրանց կանայք խայտառակվեն:

Արդ՝ ինչ որ պատվիրեցի ձեզ, անթերի կատարեք: Այդ քրդերը օսմանցիների դավանանքին էին պատկանում, այս էր պատճառը, որ շահը այդպիսի խիստ պատվեր տվեց իբրև (օսմանցի) ազգին նախատինք: Զորականները այս պատվերը ընդունելով՝ գնացին նախ կարբեցիների մոտ, իսկ կարբեցիք եկան ընկան զորականների ոտքերը, լալիս էին գոռալով, աղաղակում ու ցույց էին տալիս իրենց մերկությունը: Զորականները գրեցին այն ամենը, որ քրդերը վնաս էին տվել քրիստոնյաներին: Ապա ելան գնացին քրդերի մոտ:

Այժմ տեսեք ու լսեք, որ չարիք չմնաց, որ քրդերը չարին կարբեցիների նկատմամբ: Բայց և չմնաց փոխարենը, որ չընդունեցին զորականների բազմապատիկը: Քանզի բոլոր քուրդ տղամարդկանց բռնեցին, բոլորի ձեռքերը կապեցին հետևները և անխղճորեն ծեծցին, նրանց կանանց խայտառակելով ապականեցին, հափշտակեցին ու կողոպտեցին նրանց ինչքն ու ստացվածքը և ամեն ինչից թափուր թողին: Ապա կանչեցին կարբեցիներին և բաժանեցին նրանց քրդերի ինչքերը, գերված մանուկները հետ վերադարձրին, սպանվածների արյան գները առան իրենք: Նաև քուրդ աղջիկներից ոմանց, որ գեղեցիկ էին, գերեցին, տարան շահին: Գործը այսպես ավարտվեց: Կարբեցիք մնացին այնտեղ մինչև որ շահը Երևանը գրավեց: Դրանից հետո վերադարձան և եկան, բնակվեցին իրենց Կարբի գյուղը:

ԳԼՈՒԽ Զ
ՇԱՀԻ ԳԱԼԸ ԵՐԵՎԱՆ

Երբ եղավ մեր 1085 (1636) թվականը, պարսից թագավոր Շահ Սաֆին զորաժողով արեց հարյուր հազար մարդ, նաև արհեստավորներ, վաճառականներ, ավելի քան պատերազմող զորքերը: Սրանցով ելավ եկավ Երևանի վրա: Սուրբ Հակոբի պասի չորեքշաբթի օրը շրջապատեցին բերդը և նրա շուրջը նստան երեք ամիս:

Աստծու ողորմածությամբ ոչ մի փաթիլ ձյուն չեկավ: Ամեն կողմից զորքին սնունդ ու պիտույք էին գալիս (բնագրում գոյր, հավանորեն գայր), այդ պատճառով անհոգ էին բոլոր կողմերով և հանգիստ նստած էին: Երբ թուրքերի թագավոր սուլթան Մուրադը լսեց, որ պատերազմը ուշացավ և բերդը չգրավեցին, բերդին օգնական ուղարկեց շատ զորքով մի փաշայի, որին կոչում էին Քոռ Խազինադար: Երբ հասավ Կարին, հանկարծակի շատ սաստիկ ձյուն եկավ, և օսմանցիների զորքերը չկարողացան շարժվել: Քոռ Խազինադարը հրամայեց սուխրա՝ այսինքն կոռ հանել, որպեսզի ձյունը մաքրեն և ճանապարհ բանան զորքի համար: Բայց այն, ինչ ցերեկը մաքրում էին, գիշերը բուքը լցնում էր: Շատ չարչարվեցին, բայց ոչ մի օգուտ չեղավ: Քոռ Խազինադարը ասաց՝ Աստված է պարսիկներին օգնական, մարդը չի կարող ընդդիմանալ նրանց, գործը դադարեցրին: Մեծ պասի միջին երրորդ շաբաթում բերդը գրավեցին, քանզի Մուրթուզա փաշան, որ տիրում էր բերդը, երբ տեսավ, որ չկարողացան դիմադրել պարսից զորքերին, մահու դեղ ընդունեց, մեռավ, իսկ բերդում մնացածները բերդը հանձնեցին: Պարսիկները տիրեցին բերդին: Շահը հրամայեց օսմանցիներին, ուր ուզում են թող գնան: Նրանք վերցրին Մուրթուզա փաշայի դիակը և ելան գնալու: Երբ կեսօրվա ճանապարհ գնացին, պարսից նենգ ազգը գնաց նրանց հետևից և կոտորեց նրանց, հափշտակեց ինչքերը. մնացածները վերցրին Մուրթուզայի դիակը և փախան, գնացին Կարին: Իսկ շահը Երևանի երկիրը հանձնեց Քալբալի խանին: Ինքը առնելով Շխիջան, Մայմուն, Իբրահիմ փաշաներին՝ գնաց Սպահան: Փաշաներին ուղարկեց Անուշ բերդը, որին իրենք Ղախա ղալա են անվանում. (փաշաները) այնտեղ մնացին և այնտեղ մեռան:

ԳԼՈՒԽ Է
ԿՌՊՊԸՇՏ ՏԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Քանի դեռ շահը Երևանում էր, հրաման տվեց Մակուի բերդը քանդել և գյուղի բնակիչներին բերել Արարատի Կոտայք գավառը, բնակեցնել Կամարիս (Գամրեզ) գյուղում: Այդպես էլ արին: Նույն Մակու գյուղից մի բարեպաշտ, երկյուղած քրիստոնյա մարդ (հայ)